ընդունում նորա ծագումը։ Իսկ Horn* բացատրում է պահլաւերէն gmbat բառով, որ շատ մօտ է հնչում հայերէն տառադարձութեան, ուստի եւ հաւանական, որ Պարսկաստանից անցած լինի հայերին, մանաւանդ, որ դմբեթաւոր են եղել այնտեղ Սերվիստանի եւ Տիզբոնի պալատները Դ. եւ Զ. դարերում։ Պահլաւերէն gmbat բառը առնուած է Vendidad–ից, որ թէեւ Զենդաւեստայի հին մասերից չէ, բայց յամենայն դէպս ոչ ուշ, քան Դ. դարը։

Այսպիսով ապացուցուած ենք համարում դմբեթաւոր եկեղեցիների գոյութիւնը Ե. դարի կէսերից էլ վաղ, այսինքն Դ. դարում, մի եզրակացութիւն, որ այլ տուեալներով հիմնաւորել է Strzigowski–ն հայ արուեստին նուիրած իւր մեծ աշխատութեան եւ Ursprung der Christlichen Kunst-ի մէջ։

Թ.

Հայոց լեզուի պատմութեան մէջ մի զարմանալի երեւոյթ ենք տեսնում. մինչեւ Ե. դարը չունինք գիր, գրականութիւն, բայց յանկարծ ստեղծւում է ինքնուրոյն եւ թարգմանական մի ամբողջ գրականութիւն, այն էլ մի լեզուով, որ Ոսկեդարն է համարւում հայ լեզուի։ Նման մի երեւոյթ նկատում ենք եւ հայ արուեստի պատմութեան մէջ. ինքն ըստ ինքեան այդպիսի երեւոյթներն անհասկանալի են. պատմական երեւոյթներն իրար հետ շղթայուած եւ բազմաթիւ օղակներով միացած ամբողջութիւնից կարուած՝ հասկանալի չեն։ Այսպէս էլ մեր լեզուի կամ արուեստի պատմութեան մէջ վերեւ ակնարկուած երեւոյթը հասկանալի է դառնում միայն քրիստոնէութեան ծագման խնդիրների պարզաբանութեամբ թէ Հայաստանում եւ թէ կից երկիրներում, որոնց հետ կենդանի յարաբերութեան մէջ է եղել քաղաքական, տնտեսական, կրօնական, մշակոյթային տեսակէտներով։

Տարաբաղդաբար Դ. դարից աւելի վաղ Հայաստանի նկատմամբ գրաւոր անմիջական յիշատակարաններ չունինք, ինչպէս առ հասարակ, այնպէս էլ ճարտարապետական չէնքերի, այս դէպքում եկեղեցիների գոյութեան եւ նրանց յատակագիծների մասին։ Մի քանի յունարէն եւ լատիներէն արձանագրութիւնները հայ Արշակունիների կամ հռոմէական լեգէոնների կողմից թողնուած, մեզ ոչինչ չեն տալիս ճարտարապետութեան նկատմամբ, իսկ Գառնիի «Տրդատայ թախտը» յունա–հռոմէական բնոյթ ունի։ Սակայն բազմաթիւ եկեղեցիների գոյութիւնը Լուսաւորչի ժամանակից, Ագաթանգեղոսի եւ մանաւանդ Փաւստոս Բիւզանդի տուած տեղեկութիւններով, անուրանալի է։ Այս իրողութիւնը անժխտելի կերպով հաստատում է Ղազար Փարպեցին միջանկեալ կերպով, իւր առ Վահան Մամիկոնեան գրած թղթի մէջ յայտնելով, թէ իւր ժամանակ՝ Ե. դարի վերջերին, «յերկերիւր ամէ չինեալ» վանորայք կային, այսինքն Լուսաւորչի ժամանակից։*

Բայց բոլորովին անկարելի չէ, որ եկեղեցիներ կամ աղօթատեղիներ լինէին նոյն իսկ առաջ, թէեւ հաղուագիւտ, քանի որ իրողութիւն է, որ Հայաստանում քրիստոնէութիւն կար Լուսաւորչից առաջ։ Թողնենք առաքելական քարոզութեան աւանդութիւնը Հայաստանում. երկրորդ դարի վերջերում արդէն, Մարկոս Աւրելիանոսի ժամանակ, քրիստոնեաներ կային Մելիտինէում Legio fulminata գնդի մէջ, որի մի մասը տեղացիներ էին։ Քառասուն մանկանց նահատակութիւնը Սեբաստիայում, ուր հայ տարրը հաստատուած էր վաղ ժամանակներից, ապացոյց էր քրիստոնէութեան գոյութեան այդ շրջանում։ Երրորդ դարի կէսերից արդէն կազմակերպուած եպիսկոպոսութիւն կար Հայոց մէջ. գոցանից մէկի՝ Մեհրուժանի հետ նամակագրութիւն ունէր Դիոնեսիոս Աղեքսանդրացին 251 թուին։** Մաքսիմինուս Դայան պատերազմում է Հայերի հետ, որպէս քրիստոնեայ մի ժողովրդի հետ 311 թ.։*** Արտապի եպիսկոպոսութեան գոյութիւնը Լուսաւորչից առաջ, բոլորովին անհիմն եւ պատմական հնարաւորութիւնից զուրկ չէ։†

---

*Neupersische Philologie—Grundriss der iranischen Philologie–ի շարքում, եր. 6։

*Ղազար Փարպեցի. եր. 196. էջմ. հրտ.։

**Եւսեբիոս Կեսարացի. Եկեղեց. Պատմութիւն, եր. 8. 9։

***Müller Kirchengeschichte. 1892. եր. 56. Harnack, Die Mission. 1902. եր. 441 եւ շար., 471։

†Արարատ. 1868. 102։